

**ԳՈՅԱԿԱՆԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՆԻԱԹ
ՍԵԲԱՍՏԱՅՈՒ «ԳԻՐՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ» ԵՐԿՈՒՄ**

Քանալի բառեր՝ Բունիաթ Սեբաստացի, հոլովական համակարգ, հոլովիչ, հոլովում, հոլովման տիպ, հոլովական զուգաձևություններ, եզակի թիվ:

Հայկական բժշկագիտության վերաբերյալ վկայությունները գալիս են հնագույն ժամանակաշրջանից: Առողջ կենսակերպի, զանազան հիվանդություններից խուսափելու, բուսական և կենդանական ծագման ուտելիքների ավստաբանական հատկությունների, փորձառու բժիշկների իմացության, մարդու մարմին դարման արդյունավետ միջոցների վերաբերյալ տեղեկություններ են շարադրված հինգերորդ դարի հայ մատենագիր Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկում. «Զցլու միս ուտել՝ դարման է մարմնոյ, բայց եթէ զարինն ոք ըմպիցէ՝ սատակի: Նոյնպէս եւ ի բանջարս է ինչ՝ որ առանձին սատակիչ է, եւ խառնեալ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէսպէս ցաւոց լինի: ...Եւ զհազար՝ եթէ ի տոթ ժամանակի ուտիցէ ոք, քանզի զովացուցիչ է, զտապս ի փորոյն փարատէ. եւ եթէ ի հով ժամանակի ուտիցէ ոք, վնասէ. ...Եւ մոլախինտո, որ առանձին ի յայտնի ինչ ժամանակի սպանող է, նովմբ զմաղծս հնացեալս հնարին բժիշկք հատանել»¹:

Հիվանդությունների առաջացման պատճառը Կողբացին համարում է մարդու մարմնի չորս տարրերի՝ արյան, լորձի, դեղին և սև մաղձերի համամասնության խաթարումը:

Դավիթ Անհաղթի և Անանիա Շիրակացու երկերում քննության են ենթարկվել մարդակազմությանը, բուսաբուժությանը և դեղագիտությանը վերաբերող հարցեր: XI–XIV դդ. Կիլիկյան Հայաստանում գործել են հիվանդանոցներ և բժշկական բարձրագույն դպրոցներ: Այս շրջանից մեզ են հասել բժշկագիտական այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են բժշկագետ Մխիթար Հերացու (XII դ.) «Զերմանց մխիթարութիւն», Գրիգորիսի «Քննութիւն բնութեան

¹ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Ե., 1994, էջ 54:

Գոյականի ձևաբանական առանձնահատկությունները...

մարդոյ եւ նորին ցաւոց» (XII–XIII դդ.), Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան», «Անգիտաց անպէտ» (XV դ.) աշխատությունները, որոնք, որպէս արժեքավոր սկզբնաղբյուրներ, մեծ ազդեցություն են ունեցել հետագա դարերի հայ հետազոտողների՝ ի մասնավորի Բունիաթ Սեբաստացու բժշկագիտական ժառանգության վրա: Նկատի ունենալով բժշկության մեջ իր ունեցած տեսական և հատկապէս փորձնական գիտելիքները՝ «Գիրք բժշկութեան տումարի» բժշկարանում հեղինակը հանգամանորեն նկարագրում է ներքին հիվանդությունները, ինչպէս նաև նյարդային համակարգի ախտահարումները՝ կաթված, ջղաձգումներ, շնչուղիների, սրտի, լյարդի, փայծաղի, աչքի, ականջի, քթի հիվանդություններ: Բունիաթ Սեբաստացու բժշկարանը բաղկացած է 50 գլխից, որից 15-ը վերաբերում են նյարդային համակարգի ախտահարումներին: Վերհանելով դրանք ծնող պատճառները՝ հեղինակն առաջարկում է այդ հիվանդությունների բուժման եղանակներն ու միջոցները:

Բունիաթ Սեբաստացու ծննդյան և մահվան թվականները մեզ չեն հասել: Հայտնի է, որ անվանի բժշկապետն ապրել և ստեղծագործել է XVI դարի վերջեր – XVII դարի առաջին կես ժամանակահատվածում: Հայտնի է նաև բժշկարանը գրելու թվականը՝ 1630 թ.²: Ըստ հայերենի պատմական զարգացման ընդունված շրջանաբաժանման՝ այս թվագրումը վաղ աշխարհաբարի ենթաշրջանն է համարվում: Գ. Զահուկյանի պնդմամբ, հայերենի զարգացման վաղաշխարհաբարյան այս փուլում նկատվում է երկու գրական լեզուների միասնականացման միտում և հին գրական հայերենի՝ գրաբարի գործառույթի սահմանափակում³: Նույն տեսակետին է հանգում նաև Ռ. Իշխանյանը՝ գրելով, որ XVII դարից պահպանված ձեռագիր և տպագիր մի շարք հուշարձանների լեզուն գրաբար կամ միջին հայերենը չէ, այլ միասնական նոր գրականը, որ հարազատ է ժամանակակից հայերենին, բայց և միասնական է «այն իմաստով, որ չունի արևելահայերեն-արևմտահայերեն բաժանումը, միավորում է նրանց առանձնահատուկ տարրերը»⁴:

Հայկական բժշկարանների կենդանի լեզվի բնութագծերի վերաբերյալ ուշագրավ դիտարկում է կատարել Ս. Ղազարյանը՝ նշելով. «Հայ բժիշկներն ու գիտնականները չէին կարող գրել իրենց երկերը արդեն հայ ժողովրդին անհասկանալի դարձած գրաբարով. բայց գիտական գրքերը բարբառով գրելն էլ

² Բունիաթ Սեբաստացի, Գիրք բժշկութեան, Ե., 1987, էջ 9:

³ Զահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969.. էջ 50–68:

⁴ Իշխանյան Ռ., Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Ե., 1978, էջ 19–20:

անհնար էր, Այդ պատճառով էլ նրանք իրենց գիտական գործունեության ընթացքում հայոց լեզուն հղկելու, ավելի ճիշտ, գիտական գրականության պահանջները բավարարող տերմիններ ստեղծելու բնագավառում հսկայական աշխատանք են կատարում և մշակում են ժամանակի բժշկության կարիքները բավարարող տերմինաբանություն ու գիտական լեզու»⁵: Մեր համոզմամբ, Բունիաթ Սեբաստացու բժշկարանում առկա են հայերենի զարգացման բոլոր փուլերին բնորոշ լեզվական տարրեր, որոնց մեջ, սակայն, առանձնանում են հատկապես արևմտահայերենին բնորոշ ձևաբանական հատկանիշները: Ի վերա այսր ամենայնի՝ հողվածում քննության ենք ենթարկել գոյականների կիրառությունը Բունիաթ Սեբաստացու բժշկարանում՝ ելնելով դրանց իմաստա-գործառական և ձևաբանական յուրահատկություններից, որոնց ընդհանուր բնութագիրը կբացահայտի լեզվական նոր փաստերի ամրագրումը:

Երկում գործածված գոյականները բաժանվում են իմաստային հետևյալ խմբերի՝ մարդ, մարդու մարմնամասեր նշանակող բառեր՝ *մարդ, գլուխ, ականջ, աչք, ճակատ, երես, բասիլիկ* <հուն. «բազկի մեծ երակ», *բերան, ձեռք, ոտք, ջիղ, թոք, վիզ, փոր, ըղեղն*, կենդանիների՝ *կուղք, կաքաւ, հաւ, էշ, ծիծեռն, ոչխար*, բուսանուններ՝ *եզնալեզու, մանուշակ, վարդ, դդում, մասուր, նուշ, սոխ, սխտոր, խիար* և այլն: Կան նաև փոխառյալ բազմաթիվ բառեր, դրանցից են՝ *մասուրաք* «ծառի խեժ, ծամոն», թուրինճ, խիար <պրսկ., արաբ., *քապիլ* <Քաբուլ քաղաքի անունը, *սրքնճուպի* <պրսկ., քացախամեղրով ըմպելիք», *շաֆթալու* <պրսկ., «դեղծենի», *շարապ* <պրսկ., «գինի, խմիչք, օշարակ, մրգահյութ», *շարպաթ, սաֆրայ* <արաբ. «դեղին մաղձ», *ֆնտուխ* <պրսկ. «կաղին, պնդուկ», *աֆթիմոն* <պրսկ. <հուն. «պատատուկագգինների ընտանիքին պատկանող բույս» և այլն: Նշված բառերը ձևաբանական մակարդակում ունեն կիրառության յուրօրինակ դրսևորումներ: Դրանք տարբերվում են իրենց հոլովման տիպերի և թեքությունների գործածության հաճախականությամբ, ինչպես նաև՝ հոգնակիակազմությամբ: Մեր բառացանկում ընդգրկված են սեռական-տրական հոլովներով գործածվածները միայն, քանի որ մյուս հոլովաձևերում թեքությունները կամ հոլովիչները հիմնականում չեն պահպանվում, որի պատճառով հոլովման տիպը որոշելիս դժվարություն է առաջանում: Դրանից բացի, եզակի թվի գործիականի *ով* վերջավորությունը, միջին շրջանից սկսած, ընդհանրական է դառնում բոլոր հոլովումների համար: Ըստ վիճակագրական մեր տվյալների՝ այս բառերի գերակշռող մասը

⁵ **Ղազարյան Ա.**, Միջին հայերեն, Գիրք Ա, Ե., 1960, էջ 129:

Գոյականի ձևաբանական առանձնահատկությունները...

(շուրջ 120 բառ) ենթարկվում է *ի* հոլովման՝ *դդում-դդմի*⁶, *սագ-սագի*, *սաֆրայ-սաֆրայի*, *քիթ-քթի*, *թոք-թոքի*, *սիրտ-սրտի*, *հալկիթ-հալկթի*, *երես-երեսի*, *մանուշակ-մանուշակի*, *ջիղ-ջղի*, *թութ-թութի*, *օշնան-օշնանի* և այլն: Թեքված ձևերից 15-ը *ու*, իսկ 6-ը *ո* հոլովման բառեր են՝ *ծովու*, *հաւու*, *կաքու*, *գինու*, *այծու*. *քնոյ*, *կերակրոյ*, *ցրտոյ*, *կրծոց*, *յաւելուածոյն* և այլն: Փոքր կշիռ ունեն նաև *ա* ներքին և *ան* արտաքին հոլովման բառերը՝ արին-արեան, բնութին-բնութեան, *նուռ/ն-նուան* (66), *ջերմ/ն-ջերման* և այլն: Գրաբարից ժառանգված բազմաթիվ բառեր, անկախ ձևաիմաստային հատկանիշների ընդհանրությունից, համաբանության հիմունքով անցնում են *ի* հոլովման: Օրինակ, *ո* հոլովման թութ-թոյ, *նուշ-նշի/նշոյ*, *միս-մսոյ/մսի-մսաց*, *ցորեան-ցորենոյ*, *կերակուր-կերակրոյ*, *խունկ-խնկոյ*, *խնծոր-խնծորոյ*, *ջուր-ջրոյ*, *աղեղն-աղեղան* գրաբարյան ձևերի փոխարեն երկու հանդիպում են *թութի*, *նշի*, *մսի*, *ցորենի*, *խնկի*, *խնծորի*, *ջրի*, *կերակրի*, *աղեղի* հոլովածները: Այս հոլովման ենթարկվում են նաև բժշկարանում գործածված բոլոր փոխառյալ բառերը՝ *բակ-լայ-բակլայի*՝ արաբ. պրսկ. «թիթեռածաղկավորների ընտանիքին պատկանող բույս», *ղահվէ-ղահվէի*, *սաֆրայ-սաֆրայի*, *շարապ-շարապի* և այլն:

Գոյականների թեքման ժամանակ հնչյունափոխվել են *ա*, *է*, *ի ու* ծայնավորները, օրինակ՝ բերան-բերնի, կաքաւ-կաքւի, խաշխաշ-խաշխշի, նուշ-նշի, հալկիթ-հալկթի, էշ-իշոյ/իշու...

Բունիաթ Սեբաստացու երկի լեզվին բնորոշ չէ հոլովակազմության և հոգնակիակազմության ձևային գործածության բազմազանությունը: Այսպես, եզակի ուղղականը, որ բառի ուղիղ ձևն է, ձևաբանական ցուցիչ չունի, իսկ հոգնակի ուղղականը հարուստ է թվանիշ մասնիկներով: Եզակի հայցականը բնութագրվում է հիմնականում աննախդիր գործածությամբ, սակայն հանդիպում են նաև նախդրավոր ձևեր, օրինակ՝ *զկերակուրն չի հալէ* (էջ 66), *Եւ մանուշակի ձէթ կաթեցուր* (էջ 66), *վարդի ձէթ և քացախ և վարդի ջուր յիրար խառնէ* (էջ 67), *Կաքվուն լեղին տաք տաք կուլ տայ* (էջ 69) և այլն: Հոգնակի հայցականը ձևով նման է հոգնակի ուղղականին՝ *կերակուրք ուտէ* (էջ 109), *ի բաղանիս մտէ* (էջ 109): Հաճախ *զ* նախդիրը հատկացուցիչ-հատկացյալ կապակցություններում դրվում է լրացման վրա՝ *Ջծիծռան ձագն ի վիզն կապէ կամ զփորն ճղքէ* (էջ 69), *Չաղվիսուն ակռան ի վիզն կապեն* (էջ 69), *...զերեսաց ջեղն...և զպոկներուն և զճակտին ջղերն կու քաշի և կու ծռէ* (էջ

⁶ Բունիաթ Սեբաստացի, նշվ. աշխ., էջ 74: Մյուս բոլոր բնագրային օրինակները ևս քաղված են այս հրատարակությունից:

72), *զհակթի ճերմկուցն ի վրան դնեն* (էջ 76) և այլն: Հոգնակի սեռական-տրականում գոյականները ենթարկվում են արդեն *ու* հոլովման, որը բնորոշ է արևմտահայ բարբառներին, ինչպես՝ *ջղերու, պոկներու*, որոնց զուգահեռ երբեմն կիրառվում են գրաբարատիպ ձևեր՝ *խառնուածոց, խելաց, կրծոց* և այլն: Եզակի և հոգնակի բացառական հոլովի գործուն թեքություններն են՝ *է, ց՝ ի տամարէն* (էջ 77), *ի ծերութենէ* (էջ 76), *սրութենէ* (էջ 80), *ի գլխացաւութենէն* (էջ 80), *ի հաւապոց, աչաց* (էջ 76): Եզակի գործիականում ընդհանրական է դառնում *ով* վերջավորությունը՝ *մեղրով, ձիթով, գինով, քացիով, պապրուզով* (էջ 76, 78), *զաջօքն, կարմիր սոխի օգնութեամբն, Աստուծով* (էջ 92) և իր *կամաքն* (էջ 76): Ներգոյական հոլովի և հոլովական տարբեր իմաստներ կարող են արտահայտել ի+հայց. և ի+տրական կառույցները, օրինակ՝ *ի յաչքն ջուր կաթեցնես* (էջ 110), *ի կուրցքն դնեն* (էջ 87), *ի գլխուն կու իջնու* (էջ 87), *ի լերդին դնեն էջ 86, ի բաղնիս մուր* (էջ 111)// *գնա ի բաղնիք լուացվէ* (էջ 112):

Գոյականների հոգնակին կազմվում է *եր, ներ, նի, վի* և *ք* հոգնակերտ մասնիկներով, այսպես՝ *հապեր, հուրեր, ձիթեր, ցաւեր, շարպաթներ, պոկներ, տամարներ, բժշկնի, երկնի, ճամփնի, ոտվի, աչվի, խոզք, կերակուրք, զօդուածք* և այլն: Ինչպես տեսնում ենք, նշված հոգնակերտներից ամենահաճախվածները *եր* և *ներ* երկրորդական բառահարաբերական ձևություններն են:

Հաճախ *ն* որոշյալ հոդ է ստանում սեռական հոլովը, օրինակ՝ *երեսին գունն* (էջ 66), *զղդմին կտին կաթն* (էջ 66), *զթոքին բնութին կաւիրէ* (էջ 69):

Ինչ վերաբերում է գոյականի առման քերականական կարգին, պետք է նշել, որ հայերենի որոշյալի և անորոշի քերականական կարգն ունի իր պատմական զարգացումը, որը կապված է բառաձևերի պատմական փոփոխությունների հետ: Ն հոդի կիրառության սահմանները ընդլայնվում են միջին հայերենում, բարբառներում, արևմտահայ և արևելահայ գրական լեզուներում: Ի սկզբանե հնդեվրոպական լեզուները հոդեր չունեին, դրանց գործառույթն իրացրել են ցուցական դերանունները: Այսպես, հոմերոսյան շրջանում, օրինակ, հունարենը հոդ չուներ, իսկ աստիկյան շրջանում դրանք արդեն ձևավորված էին: Ինչպես հնդեվրոպական մյուս լեզուներում, հայերենի *ս, դ, ն* հոդերը ևս առաջացել են ցուցական դերանուններից և արտահայտում են ստացականության, ցուցականության և դիմորոշության իմաստներ: Գրաբարում *ն* հոդի այդ իմաստներն ունեին թույլ արտահայտություն, հստակ տարբերակված էր միայն որոշյալության իմաստը: Գրաբարը չուներ *ը* հոդ, այն առաջացել է հետագայում՝ բաղաձայնահանգ բառերի վերջին *ն*-ի ըն արտասանությամբ:

Գոյականի ձևաբանական առանձնահատկությունները...

յան հետագա փոփոխությամբ. *ն-ն* ընկնում է, փոխարենը գրվում է լսվող *ը-ն*⁷: Միջին հայերենում *ն-ն* լայն կիրառություն ուներ, որը շարունակվում է հետագա դարերում: Ն որոշյալ հոդը հաճախված է նաև XVII դարի սույն բժշկարանում: Ն ստանում են ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական հոլովները՝ *զջուրն խմցուր, գունն արծիծի գունովն, կերակուրքն, թզին ծառին կեղնն հանէ եփէ* (էջ 110), *բասիլիկէն արին հանեն, ի վրա տեղացն ծխէ* (էջ 104), *ի յոփիցն* (էջ 106), *երեսին գունն կարմիր լինի* (էջ 105), *եւ այս լուծման դեղս...այս ցաւուս վերաբերութիւն լաւ է* (էջ 107), *ձմռան ատուրքն լինի* (էջ 108), *բժշկնին* (էջ 109), *յայս տերևէս* (էջ 110), *ի բաղանիսն քսեն* (էջ 111) և այլն:

Բունիաթ Սեբաստացու երկում գործածված գոյականների ձևաբանական վերոնշյալ քննությունից պարզ է դառնում, որ երկի լեզվի և այդ ժամանակաշրջանի խոսակցական լեզվի միջև ընդհանրություններն ակնհայտ են, իսկ որոշ նկատվող տարբերությունները, ինչպիսիք են գրաբարյան ձևերը, համակարգային բնույթ չեն կրում և ունեն ոճական արժեք:

Ամփոփելով գոյականների թեքված ձևերի ընդգրկման ծավալը՝ կարելի է արձանագրել երկի լեզվում առկա գոյականի բնութագրիչ ձևաբանական սույն իրողությունները՝ ա) գոյականը թեքվում է. եզակի թվում այն ենթարկվում է հիմնականում *ի*, իսկ հոգնակի թվում՝ *ու* հոլովման, և բնականաբար տեղի է ունենում մյուս հոլովումների գործածության հաճախականության սահմանափակում, բ) միավանկ գոյականների հոգնակին կազմվում է *եր*, իսկ բազմավանկ գոյականների հոգնակին *ներ* հոգնակերտներով, գ) բոլոր հոլովները կարող են *ն* որոշյալ հոդ ստանալ, *ս* հոդը ցուցականության իմաստով գործածվում է *այս* դերանվան հետ միայն, դ) գոյականը ներգոյական հոլով չունի: Այս հիմնավորմանն ավելացնենք, որ *ո/ու* հնչյունափոխությամբ սկսում է գործառել հոգնակի թվի թեք հոլովաձևերի *ու* հոլովիչը, որը հետագայում տիրապետող է դառնում արևմտահայ գրական լեզվում:

⁷ Պետրոսյան Հ., Գոյականի առումները հայերենում, Ե., 1960, էջ 37–40:

МОРФОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ СУЩЕСТВИТЕЛЬНОГО В ТРУДЕ БУНИАТА СЕБАСТАЦИ «КНИГА О МЕДИЦИНЕ»

ХАЧАТРЯН А.

Резюме

Ключевые слова: Буниат Себасти, «Книга о медицине», ранний ашхарабар, грамматическая категория, тип склонения, система склонений, падежные морфемы.

В «Книге о медицине» врачевателя XVII в. Буниата Себасти использованы доминирующие типы склонения раннего ашхарабара. Морфологический анализ текста приводит к заключению, что язык этого труда не отличается разнообразием типов склонений и морфем множественного числа. Большинство существительных (примерно 100 существительных) относится к простому склонению ի. Очень мало существительных, относящихся к другим типам склонения: ու, ո, տ, տի. Множественное число в основном образовано с помощью морфем –եր, –ներ. Во всех падежах существительные могут иметь определительный артикль. В труде Буниата Себасти использованы также формы древнеармянских и среднеармянских склонений, однако мы видим, что большинство существительных в ашхарабаре – в новом литературном языке – относится к склонению ի, которое стало универсальным.

MORPHOLOGICAL FEATURES OF THE NOUN IN BUNIA SEBASTACI'S "A BOOK OF MEDICINE"

KNACHATRYAN A.

Summary

Key words: Buniat Sebastatsi, "A book of Medicine", early Ashkharabar, grammatical category, type of declension, declension system, case morphemes.

Գոյականի ձևաբանական առանձնահատկությունները...

A physician of the early 17-th century Buniat Sebastaci wrote his famous work “A Book of Medicine” in 1630. We have identified the dominant types of declension of the early askharabar. Morphological analysis has shown that the language of this work does not differ in the variety of types of declensions and plural morphemes. In this book, most nouns (about 100 nouns) belong to the simple declension ի. There are very few nouns belonging to other types of declension: ու, ո, ա, աւ. The plural is mainly formed by morphemes –եր, –ներ.

All cases can receive a definite article. In the “A Book of Medicine” by Buniat Sebastatsi, there are also Old Armenian and Middle Armenian forms of different declensions, however, it is already noticeable that most of the nouns in Ashkharabar- in the new literary language have switched to declension ի, which has become universal.